>>>

- Մղասարկում -

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԼՈՒԾՎԵՆ ՏԵՂՈՒՄ

Անդրկովկասում «Caterpillar»-ի կոմպոնենտների կապիտալ նորոգման առաջին կենտրոնի բացումը

ՊԻՏԵՐ ԳԵՐՑՄԱՆ
«Ցեպելին Գրուպ»-ի նախագահ

«Ցեպելինի» հաջողության գրավականն իր մասնագետներն են: Նրանց շնորհիվ ընկերությունն իրագործում է անհավանական թվացող ծրագրեր աշխարհի տարբեր երկրներում: Կոմպոնենտների կապիտալ նորոգման այս կենտրոնում նույնպես աշխատելու են բարձրակարգ մասնագետներ»:

Այս խոսքերով սկսեց գերմանական հանրահռչակ կոնցեռնի նախագահ Պիտեր Գերցմանը Կենտրոնի բացման արարողությունը «Ցեպելին Արմենիա» ընկերության Աբովյանի մասնաճյուղում: Այսուհետ կարիք չի լինի Հայաստանի հանքարդյունաբերության, ճանապարհաշինության եւ այլ ոլորտներում գործող շուրջ 400 միավոր «Caterpillar» մակնիշի մեքենաների բաղադրամասերը նորոգելու նպատակով ուղարկել հեռավոր երկրներ: Դրանք կնորոգվեն Հայաստանում՝ կարճ ժամանակում վերադառնալով աշխատանքային մեկնակետ:

Պ. Գերցմանի կարծիքով, ամերիկյան «Caterpillar» ընկերությունը բացառիկ գործընկեր է, որի հետ դեռեւս վեց տասնամյակ առաջ կնքած պայմանագիրը շրջադարձային եղավ «Ցեպելին Գրուպի» համար: Դա հնարավորություն տվեց ընդլայնել գործունեությունը՝ հետզհետե վերածվելով առաջատար արտադրական կոնցեռնի, որի տարեկան շրջանառությունը ներկայումս կազմում է երկու միլիարդ եվրո: Այն ներկայացված է աշխարհի ավելի քան 30 երկրներում եւ ունի շուրջ 190 մասնաճյուղ: Այսօր արդեն հնարավորություն է ընձեռվել ընկերության՝ տարիների ընթացքում կուտակած փորձը փոխանցել նաեւ հայ մասնագետներին:

Գրեթե միեւնույն ժամանակահատվածում՝ 20-րդ դարասկզբին, աշխարհի տարբեր ծայրերում հիմնադրված այս երկու ընկերությունների արդյունավետ համագործակցության մասին խոսեց նաեւ «Caterpillar Eurasia»-ի նախագահ **Մումին Ազամխուժաեւը**. «Մեր հաջողությունները հիմնված են թիմային աշխատանքի եւ պարտավորվածության վրա: Եվս մեկ կարեւոր պայման է ցանկացած աշխատանքի գերազանց կատարումը: Այս

աշխատաոճն է գործելու նաեւ նորաբաց կենտրոնում, ինչը թույլ կտա առավելագույն որակով եւ սեղմ ժամկետում բավարարել հաճախորդի պահանջները»:

Ընկերության տարածաշրջանային տնօրեն **Հայկո Կրայսելը** ներկայացրեց 2005-ից Հայաստանում գործող «Ցեպելին Արմենիայի» գործունեությունը: Բացի առաջարկվող տեխնիկայի շուրջ 650 մոդելներից (շինարարական, ճանապարհաշինարարական, հանքարդյունաբերական մեխանիզմներ եւ ուժային սարքավորումներ) ընկերությունն ունի նաեւ սպասարկման, ֆինանսավորման, մեքենաների վարձակալության, բարձրակարգ մասնագետների խորհրդատվության եւ այլ ծառայություններ:

«Ցեպելին Արմենիայի» չորս մասնաճյուղերին շուտով կմիանա եւս մեկը՝ Արցախում: Ինչ վերաբերում է Աբովյանի մասնաճյուղին, այն սպասարկման համաշխարհային չափանիշերին հասցնելու համար «Ցեպելինը» ներդրել է 1,5 մլն ԱՄՆ դոլար: Տարիներ առաջ այս տարածքում գտնվող գրեթե փլուզված կառույցն ու անբարեկարգ բակն այսօր անճանաչելի են. ներդրումը ծառայել է սպասարկման եւ անվտանգության համաշխարհային չափանիշեր ապահովելու, ընկերության վարչական կառույցն ու պահեստն արդիականացնելու, բաղադրիչների լվացման համար տեխնիկական սարքավորումներ ձեռք բերելու եւ այլ նպատակների:

Իրականացված միջոցառումների, նաեւ Կոմպոնենտների նորոգման կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ պայմանների ու մաքրության (Contamination control) պահանջն ապահովելու համար այս տարվա ապրիլին «Caterpillar»-ը «Ցեպելին Արմենիային» շնորհել է չորս աստղ:

«Գլոբալիզացիայի դրական կողմը»՝ այսպես որակեց ԱՄՆ դեսպան **Ջոն Հեֆերնը** Հայաստանի, ԱՄՆ-ի եւ Գերմանիայի համատեղ այս նախագիծը, որը սպասարկման արեւմտյան չափորոշիչներ է ներմուծում մեր երկիր. «Թեեւ «Caterpillar» ընկերության արտադրանքն այնքան որակյալ է, որ վերանորոգման կարիք շատ ուշ է ունենում, այնուամենայնիվ, ինչպես բոլոր մեխանիզմները, դրանք էլ պարբերաբար հոգածություն են պահանջում»: Դեսպանը նշեց, որ Կոմպոնենտների նորոգման կենտրոնի բացումը Հայաստանի տնտեսության զարգացմանն ուղղված՝ Եվրոպայի եւ ԱՄՆ-ի համագործակցության միակ օրինակը չէ:

Կենտրոնը եւս մեկ կարեւոր խնդիր է լուծում. նման ծրագրերի արդյունքում հայերը չեն հեռանա Հայաստանից, կապրեն եւ կաշխատեն իրենց հայրենիքում,- նկատեց ԳԴՀ դեսպան **Հանս-Յոհեն Շմիդտը:** Նա խոսեց «Caterpillar»-ի սարքավորումները Հայաստան ներմուծելու եւ հանքարդյունաբերության ոլորտում, մասնավորապես, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում դրանց արդյունավետ աշխատանքի մասին: Հայաստանի փորձը «Ցեպելինի» համար զարգացման լայն հեռանկարներ է բացում հետ-

ՀԱՅԿՈ ԿՐԱՅՍԵԼ
«Ցեպելին Արմենիայի» գլխավոր տնօրեն

ՄՈՒՄԻՆ ԱԶԱՄԽՈՒԺԱԵՎ
«Caterpillar Eurasia»-ի նախագահ

ՅՈՀԵՆ ՇՄԻԴՏ
ԳԴՀ դեսպան

ՋՈՆ ՀԵՖԵՐՆ
ԱՄՆ դեսպան

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
Հայաստանի շինարարների միության նախագահ

խորհրդային այլ երկրներում եւս վստահորեն գործելու համար:

«Ցեպելին Արմենիայի» ներկրած մեխանիզմները վերանորոգելու եւ շահագործելու առումով Կենտրոնի բացումը կարեւորեց նաեւ ՀՀ տրանսպորտի փոխնախարար **Հրանտ Բեգլարյանը**:

Հայաստանյան շինարարական ընկերություններից «Հորիզոն 95»-ն առաջինն էր, որ ձեռք բերեց «Caterpillar»-ի հինգ միավոր տեխնիկա՝ բուլդոզեր, էքսկավատորներ, ամբարձիչներ: «Մեծ պատիվ է լինել «Ցեպելին Արմենիայի» առաջին հաճախորդը,- ասաց ընկերության տնօրեն, Հայաստանի շինարարների միության նախագահ **Գագիկ Գալստյանը**: - Կոմպոնենտների նորոգման կենտրոնի բացումը շինարարի աշխատանքը խթանելուն ուղղված հզոր քայլ է»:

Ընկերության մշտական հաճախորդների թվում են հանքարդյունաբերական եւ շինարարական առաջատար ընկերությունները: Հայաստանի շինարարական կազմակերպություններից 55-ն արդեն ձեռք են բերել «Ցեպելին Արմենիայի» առաջարկած մեքենաներն ու սարքավորումները: Շինարարների միության նախագահն առաջարկեց հնարավորության դեպքում Ստեփանակերտում, Գյումրիում, Գորիսում, Վանաձորում համակարգչային սպասարկում իրականացնել, ինչը թույլ կտա արագ հայտնաբե-

Կոմպոնենտների կապիտալ նորոգման կենտրոնի առաջին «այցելուն» Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից բերված շարժիչն է, որը վերանորոգվելուց հետո կրկին կսպասարկի հանքաքար տեղափոխող 140 տոննայանոց «Caterpillar» բեռնատար մեքենաների:

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
«Ցեպելին Արմենիայի» հանքարդյունահանման մեխանիզմների բաժնի ղեկավար

ԱՇՈՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տեխնիկական տնօրեն

ԻԳՈՐ ԿԱԼԻՆԻՆ
«Ցեպելին Արմենիայի» հանքարդյունաբերության սպասարկման մենեջեր

րել մեխանիզմների վնասվածքները՝ կրճատելով նորոգման եւ տեղադրման հետագա ընթացքը:

«Ցեպելին Արմենիա» հանքարդյունահանման մեխանիզմների բաժնի ղեկավար **Հայկ Մարտիրոսյանը** ներկայացրեց Կոմպոնենտների նորոգման կենտրոնի սպասարկման հնարավորությունները: Մեքենայի լվացում, համապատասխան հենասարքերով կոմպոնենտի քանդում, բաղկացուցիչների լվացում, թերությունների զննում, կապիտալ վերանորոգում. սրանք այն փուլերն են, որոնք նորաբաց կենտրոնում պետք է անցնի մեքենայի վնասված բաղադրիչը: Դրանից հետո բաղադրամասերը հավաքվում են հատուկ սարքերի միջոցով:

Կապիտալ նորոգման կենտրոնը նախատեսում է տարեկան մոտ 180 բաղադրիչի վերանորոգում՝ մինչեւ 36 ամիս (10 000 ժամ) երաշխիքի հնարավորությամբ:

Քանի որ սա տարածաշրջանի միակ նմանատիպ կենտրոնն է, չի բացառվում հաճախորդների հոսքը հարեւան երկրներից: Բազմաթիվ պատվերներին ընդառաջելու հնարավորությունը պայմանավորված է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների առկայությամբ:

Միջոցառման ընթացքում բազմիցս հնչած «մեր աշխատակիցները մեր հաջողության հիմնական գրավականն են» արտահայտությունը «Ցեպելին» ընկերության համար զուտ կարգախոս չէ: «Ցեպելինի»՝ տաղանդավոր մարդկանց ձգելու հատկության մեջ բոլորովին էլ գաղտնիք չկա: Մասնագետներին այստեղ խրախուսում եւ քաջալերում են հնարավոր բոլոր միջոցներով: Սա կենտրոնի գործելաոճն է, ծեռագիրը եւ նոր ձեռքբերումների կայուն երաշխիքը:

ՀԱՍՄԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Տիգրան Հարությունյանը համոզված է՝ նորաբաց կենտրոնն արժանի կլինի ապրանքանիշի բարի համբավին, եւ նրա ծառայություններից տեղական սպառողները կօգտվեն գոհունակությամբ:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տեխնիկական տնօրեն Աշոտ Մարգարյան. ***«Նախկինում վնասված բաղադրիչները նորոգելու նպատակով ուղարկում էինք Եվրոպա կամ Ամերիկա՝ երկար ժամանակ սպասելով վերադարձին: Հիմա դրանք կնորոգվեն մեր երկրում՝ ապահովելով մեքենաների նվազագույն կանգ»:***

«Ցեպելին Արմենիայի»՝ հանքարդյունաբերության սպասարկման մենեջեր Իգոր Կալինին. ***«Եվրոպական հեղինակավոր ընկերությունն ապահովում է արտադրության եւ վերանորոգման համար անհրաժեշտ պայմաններն ու մաքրությունը՝ եւ հետո միայն տալիս երաշխիքներ. սա բարձրակարգ սպասարկման կարեւորագույն գործոն է»:***

«Ցեպելինի»՝ տաղանդավոր մարդկանց ձգելու հատկության մեջ բոլորովին էլ գաղտնիք չկա: Մասնագետներին այստեղ խրախուսում եւ քաջալերում են հնարավոր բոլոր միջոցներով: